# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /2/

Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան բնակավայրում տեղի ունեցած հանրային լսում «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Նոյեմբերյան բնակավայրի դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ

03.11.2025թ Նոյեմբերյան բնակավայր

ՕՐԱԿԱՐԳ: Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան բնակավայրում դպրոցի կառուցում:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի վարչական ղեկավար Սամվել Բաղալյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Արմինե Գաբրիելյանը, «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դավիթ Սահակյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. նոյեմբերի 3-ին ժամը 14:00-ին Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում տեղի ունեցավ «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան բնակավայրում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները, գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, դրանց մեղմման ուղղված միջոցառումները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հնչեց հարց խմելու ջրի բերման աղբյուրի վերաբերյալ, ինչին նախաձեռնողը պատասխանեց, որ ջրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ համայնքի մասնակիցները որոշեցին հավանություն տալ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան բնակավայրում դպրոցի կառուցման աշխատանքներին:

Արձանագրությանը կցված է հանրային լսումների մասնակիցների ցանկը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան

Նախաձեռնող ընկերության ներկայացուցիչ ՝ Դավիթ Սահակյան